

Սփյուռք

Ջավախահայերի առօրյան

Վրաստանի Սամցխե-Ջավախեթի մարզի բնակչության իննսունհինգ տոկոսը հայեր են: Մարզի հայաշատ շրջաններն են՝ Ախալցխան, Ախալքալաքը, Նինոծմինդան և Ծալկան, որոնք պետությունից ընդհանրապես ոչ մի օգնություն չեն ստանում:

Ջավախքում, ինչպես և Վրաստանի այլ վայրերում, հետզհետե ոչնչացվում են հայկական մշակութային կոթողներն ու շինությունները, իսկ եկեղեցիները վրացականացվում են կամ վերածվում են վրացական կուսանոցների: Մարզում չի գործում ոչ մի պետական հայկական բուհ կամ որևէ մշակութային հաստատություն: Ախալքալաքում կազմավորվել է «Միասնական Ջավախք» կուսակցությունը, որն առանձնապես չի ողջունվում վրացական ղեկավարության կողմից: Այն հիմնականում զբաղվում է Ջավախքի, ինչպես նաև Վրաստանի այլ շրջանների հայերին վերաբերվող խնդիրներով: Կուսակցության ղեկավար Վահագն Չախալյանը մի քանի հանրահավաքներ և ցույցեր կազմակերպելուց հետո ձերբակալվել է: Նա իր ելույթում հայտարարել է. «Վրաստանի կառավարությունը հայերին հնարավորություն չի տալիս հայկական պետական բուհեր, մանկատներ, մանկապարտեզներ բացելու, որոնց կարևորությունը խիստ անհրաժեշտ է»: Այնտեղ արգելված է նաև «Հայոց պատմություն» առարկայի ուսուցումը: Այս հարցերով հանրահավաքներ են անցկացվում նաև Երևանում:

Այժմ Ախալքալաքում գործում է մեկ պետական բուհ, որը սկզբից նախատեսված էր հայերեն լեզվով նույնպես ուսում ստացողների համար, սակայն հետագայում հայկական բաժինը փակվեց: Հայ երիտասարդության վրաց լեզվի չտիրապետելու պատճառով՝ բուհի ուսանողների յոթնասուն տոկոսը այլ շրջաններից եկած վրացիներ են:

Այսօր ջավախքին կանգնել է մեծ ճգնաժամի առջև: Եթե նախկինում բնակչությունն օգտվում էր արտազան աշխատանքի հնարավորությունից, ապա ռուսական զորքը տեղահանելուց հետո՝ Ռուսաստան մեկնելը նույնպես խտիվ արգելված է: Դժվարացել է նաև Հայաստան մեկնելը: Մնում է միայն զբաղվել անասնապահությամբ և հողագործությամբ, որն էլ առանց պետության աջակցության ոչ մի եկամուտ չի բերում:

Ստեղծված իրավիճակի հետևանքով՝ օրեցօր ավելանում է Վրաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվողների թիվը: Մարդիկ կամավոր թողնում են իրենց տունն ու տեղը և հեռանում երկրից:

Ջավախքի ամենաարդիական բեման Կարս-Ախալքալաք-Թիֆլիս-Բաքու երկաթգծի կառուցումն է, որի առիթով նույնպես առաջացել են մի շարք տարածայնություններ: Այս քեմայով էրևանում «Ջավախք» միության կազմակերպիչ Շիրակ Թորոսյանը մամուլի ասուլիսի ժամանակ ասել է. «Երկաթգծի կառուցումը մեր ժողովրդի համար շահեկան է, եթե այն շահեկան լինի Հայաստանի համար»: Նա նշել է նաև, որ ջավախահայությունը միշտ եղել է Հայաստանին կողմնակից և պաշտպանել է Հայաստանի Հանրապետության շահերը: Իսկ Ախալքալաքում տեղի է ունեցել հայ ինտիլիգենցիայի միտ, որտեղ քննարկվել են հիմնականում երեք կարևորագույն հարց.

1. Հայոց լեզվի պահպանումը Ջավախքում՝ որպես պետական լեզու
 2. Քաղաքական անցուղարձի բարելավում
 3. Կարս-Ախալքալաք-Թիֆլիս-Բաքու երկաթգծի շինարարությունը
- Այս հարցերը քննարկումից հետո ուղարկվել են Վրաստանի Հանրապետության նախագահին և Վրաստանի կրթության ու գիտության նախարարությանը:

Արմինե Ռոմանյան



«Ճանաչել փնատությունը և վխրատ, իմանալ վրանս հանձարոյ»

Սովորե՛ք Հայերեն
Учите армянский!

խոսե՛ք Հայերեն
Говорите по-армянски!

խորհե՛ք Հայերեն
Думайте по-армянски!

Ապրե՛ք Հայերեն
Живите по-армянски!

ՄՐՈԿ 11

ԴՐԱ 11

ՅՅՄԿ ԲՄԿՎԱ

[n']	Փ, փ
[t']	Թ, ք
[k']	Ք, ք

Глухие придыхательные п', т', к'

Глухие придыхательные согласные [n'], [t'], [k'] на письме обозначаются буквами փ, ք, ք. Как уже вам известно, у этих звуков нет эквивалентов в русском языке, и поэтому, если вы хотите научиться правильно произносить армянские слова, обратите на них особое внимание.

Эти звуки произносятся как русские глухие твердые согласные п, т, к, но с большим напряжением и сильным придыханием. Как уже было сказано, придыхание в транскрипции обозначаем знаком ['] сверху справа от буквы.

ՅՅՄԿ [n']

Это губно-губной смычной глухой придыхательный согласный звук. При образовании звука [n'] губы плотно смыкаются (плотнее, чем при [n]), образуя полный затвор, вследствие чего при разрыве этого затвора струей воздуха образуется шум с придыханием. Затем, сомкнув губы плотнее, чем при [n], образуйте полный затвор и сильной струей воздуха с придыханием разорвите этот затвор. Вы про-

изнесете звук [n'], так как звук [n] и [n'] различаются только придыханием, произнесите несколько раз эту пару звуков, чтобы привыкнуть к их произношению и различию между ними.

1) Напишите прописную и строчную букву Փ, փ.



2) Прочитайте несколько раз, перепишите в ваш словарь следующие слова и запомните их произношение.

- փակ [n'ak] закрытый, замок
- փակել [n'akel] закрывать, запирать
- փափուկ [n'ap'uk] мягкий
- փոխել [n'oxel] менять
- փայտ [n'ait] древесина, дрова, палка, посох
- ափսոս [ap'sos] (выражение сожаления) жаль, жалко
- ափսոսալ [ap'sosal] сожалеть
- ափ [ap] берег, ладонь
- փայլ [n'ail] сияние, блеск
- փայլել [n'ailel] сиять, блестять
- փիլիսոփա [n'ilisop'a] философ

ՅՅՄԿ [t']

Это переднеязычный смычной глухой придыхательный согласный. При образовании звука [t'] кончик языка смыкается с верхними зубами и нижним краем альвеол (плотнее, чем при [t]). Сильная воздушная струя разрывает затвор, вследствие чего образуется шум с придыханием, как и при образовании [n'].

Произнесите звук [t], затем сомкните плотно (плотнее,

чем при [t]) кончик языка с верхними зубами и нижним краем альвеол, образуя затвор, и сильной воздушной струей с придыханием разорвите этот затвор. Вы произнесете звук [t'], произнесите несколько раз [t] и [t'], чтобы привыкнуть к их произношению и различию между ними.

1) Напишите прописную и строчную букву Թ, ք.



2) Прочитайте несколько раз, перепишите и запомните следующие слова и их произношение:


- թերթ [t'ert'] газета, лист (бумаги)
- թեյ [t'ej] чай
- թել [t'el] нитка
- թանգարան [t'angaran] музей
- թարթիչ [t'art'ich] ресница
- թարթիլ [t'art'el] моргать
- կաթ [kat] молоко
- բնավորություն [b'navorut'jun] характер
- պատմություն [patmut'jun] история
- լավություն [lavut'jun] добро, хорошее дело
- թափել [t'ap'el] высыпать, выливать
- թիմ [t'im] команда (спорт.)
- թատրոն [t'atron] театр
- թարմ [t'arm] свежий
- թև [t'ev] рука; крыло
- ուշադրություն [ushadrut'jun] внимание
- սովորություն [sovorut'jun] привычка

ՅՅՄԿ [k']

Это заднеязычный смычной глухой придыхательный согласный звук. При образо-

вании звука [k'] язык оттянуть назад, задняя часть языка поднимается к мягкому небу, образуя плотное смыкание (плотнее, чем при [k]). В результате смыкания и взрыва сомкнутых органов речи с придыханием образуется придыхательный звук [k'], как и при [n'], [t']. Звук [k'] произносится примерно так, как в русском слове кто.

1) Напишите прописную и строчную букву Ք, ք.




2) Прочитайте несколько раз, перепишите и запомните следующие слова и их произношение:

- քար [k'ar] камень
- քարոտ [k'arot] каменистый
- քուն [k'un] сон
- քույր [k'ujr] сестра
- քնել [k'ynel] спать, засыпать
- քննել [k'ynn'el] экзаменовывать
- քննություն [k'ynnut'jun] экзамен
- քիթ [k'it] нос
- քիմիա [k'imja] химия
- քիմիկոս [k'imikos] химик
- քանի [k'ani] сколько
- մի քանի [mi k'ani] несколько
- քայլ [k'ajl] шаг
- քայլել [k'ajl'el] шагать, ходить
- քամի [k'am] ветер
- քաշել [k'as'el] тянуть
- քաղաք [k'ax'ak] город
- շենք [shenk'] здание
- գիրք [girk'] книга
- խոսք [xosk'] речь, слово
- մենք [menk'] мы
- տեսք [tesk'] вид, внешность

Курс ведет Арmine ОБСЕПАН

ԱՍՏՕՆ ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

6 Մի՛ սպանիր



Մարդասպանությունը ծանրագույն ոճրագործություն է: Ոչ ոք իրավունք չունի սպանել Աստծո պատկերով և նմանությամբ արարված մարդուն: Դժբախտաբար, մարդիկ խախտում են այս պատվիրանը. և դա կատարվում է երեք ձևով՝ մտքով, խոսքով և գործով: Նախ՝ մտքով ենք խախտում, երբ նախանձում, բարկանում, ատում, ոխ ենք պահում. նաև՝ երբ համառորեն մեր մեջ չենք ընդունում ճշմարտությունը, ամբողջությամբ չենք զղջում և ցավում մեր մեղքերի համար և հուսահատված՝ մտադրվում ենք ինքնասպան լինել, որն ավելի ծանր և անմեղելի մեղք է, քան մարդասպանությունը, որովհետև նախ՝ մեր կյանքն Աստված է տվել և միայն Նա կարող է վերցնել. «Ես եմ սպանում և ես եմ փրկում» (Բ Օր. ԼԲ 39), և երկրորդ՝ որևէ մարդասպան դեռ հնարավորություն ունի ապաշխարելու և իր մեղքը քավելու՝ թեկուզ իր արյամբ, սակայն ինքնասպանը չունի այդ հնարավորությունը: Այս մահացու մեղքի տակ են ընկնում նաև նրանք, ովքեր իրենց ամոքությունը մոխրում են ծուլությամբ, որկրամոլությամբ, արբեցողությամբ կամ թմրադեղերի օգտագործմամբ և հեշտափրության մեջ, ինչպես նաև նրանք, ովքեր չեն պաշտպանվում հիվանդություններից, հիվանդանալիս չեն դիմում բժշկների կամ էլ բժշկական օգնության

համար դիմում են անգետ, չարադավան միջոցներով բուժողների:

Երկրորդ՝ սպանությունը լինում է նաև խոսքով, որ պատճառ է դառնում հոգևոր և մարմնավոր մահվան: Սպանություն ենք գործում, երբ չարախոսում ենք, բանբասում, դավաճանում, անիծում, հայհոյում, կոպտում և նմանափայլ այլ բաներ անում՝ վնաս հասցնելով մարդկանց կյանքին և առողջությանը: Մարդասպանության մասնակից ենք լինում, երբ խոսքերով՝ չար ուսմունքով ու կեղծ քարոզչությամբ, սարդանքով ու հրահրելով, չարանենգ հովանավորչությամբ պատճառ ենք դառնում հավատափոխության ու դավաճափոխության, աղանդների, հակաքրիստոնեական ու չարադավան ուսմունքների, հակաեկեղեցական, հակապետական, ապագային և հակամարդկային զանազան հանցագործությունների ծագման ու առաջխաղացման:

Երրորդ՝ սպանությունը լինում է գործով, երբ վերը նշված այս մեղքերն ու հանցանքները մահաբեր գործի ենք վերածում: Գործով սպանություն ենք գործում, երբ ուղղակի կամ անուղղակի ինքնասպանություն ենք ունենում սպանությանը, նպատակ ենք մահվան դատապարտելու մարդկանց. երբ մեղավորներին կամ ենթականերին պատժում ենք ավելորդ ատելությամբ և դաժանությամբ.

երբ ճնշում, կեղեքում, զրկում և տարբեր միջոցներով մահվան դուռն ենք հասցնում աղքատներին, անօգնականներին, տնամակներին, այրիներին և որբերին:

Սպանության մեղք են գործում այն կանայք, ովքեր երեխա չունենալու կամ իրենց մարմնական մեղքը թաքցնելու համար տարբեր հնարքներով վիժեցնում են իրենց մեջ աղմուկավորված պտուղը: Այս մեղքի համար ոչ պակաս պատասխանատվություն են կրում այս կանանց ամուսինները, եթե դա կատարվել է իրենց համաձայնությամբ կամ թելադրանքով, ինչպես նաև այս ամենին նպաստող բժիշկները և խորհրդատուները: Աստվածային այս պատվիրանն արգելում է կյանքի և մեր մերձավորների բարեկեցության դեմ որևէ ոտնձգություն. փոխարենը՝ հորդորում է մեզ, որ բարիք գործենք մարդկանց համար, օգնենք աղքատներին, թեթևացնենք դժբախտների և թշվառների ծանր վիճակը, բոլորի նկատմամբ լինենք ողորմած, բարեսիրտ, քաղաքավարի և բարյացակամ, հարբենք վեճերն ու վերջ տանք թշնամություններին, հաշտվենք միմյանց հետ, համբերությամբ տանենք վիրավորանքները և ներենք բոլորին:

Օրհնությամբ և աղոթքով՝ Տեր Անանիա քին Բաբայան